

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎ ՐՈՊՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ
ԲԼԱԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Բուլղարիայի
Հանրապետության

Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ղեկավարվելով 1995 թ. ապրիլի 10-ին ստորագրված՝ "Հայաստանի Հանրապետության
եւ Բուլղարիայի Հանրապետության միջեւ բարեկամական հարաբերությունների եւ
համագործակցության մասին" պայմանագրի ոգով եւ դրույթներով,

Ելելով Միավորված ազգերի կազմակերպությունում, Եվրոպայում անվտանգության
եւ համագործակցության կազմակերպությունում, Սեւծովյան տնտեսական
համագործակցության կազմակերպությունում, Եվրոպայի խորհրդում եւ այլ միջազգային
կազմակերպություններում եւ տարածաշրջանային կոնֆերանսներում
համագործակցության

բարձր մակարդակը եւ արդյունքները,
Նպատակ ունենալով խթանել հարաբերությունների հետագա զարգացումը եւ
ամրապնդել շարունակական համագործակցությունը Եվրոպական ինտեգրացիայի եւ
Եվրատլանտյան գործընկերության ոլորտում փոխադարձ հետաքրքրություն
ներկայացնող

բնագավառներում,
հաշվի առնելով Բուլղարիայի Հանրապետության կողմից Եվրոպայի միությանը
միանալու պայմանագիրը եւ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական
համայնքների

եւ Նրանց անդամ պետությունների միջեւ կնքված՝ գործընկերության եւ
համագործակցության համաձայնագիրը, ինչպես նաեւ Հայաստանի ընդգրկումը
Եվրոպական

հարեւանության քաղաքականության մեջ,
Ելելով Բուլղարիայի Հանրապետության անդամակցությունը Հյուսիսատլանտյան
պայմանագրի կազմակերպությանը եւ Հայաստանի Հանրապետության ձգտումը՝
խորացնել

համագործակցությունը ՆԱՏՕ-ի՝ ներառյալ Անհատական գործընկերության
գործողությունների ծրագրի միջոցով,
համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈՂՎԵՐ 1

Կողմերը հաստատում են իրենց պատրաստակամությունը՝ շարունակել իրենց ակտիվ
համագործակցությունը Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության
կազմակերպության շրջանակներում եւ ամրապնդել ԵԱՀԿ-ի դերը, որպես
հակամարտությունների խաղաղ կարգավորման միջոցի, ԵԱՀԿ տարածաշրջանում
(ներառյալ

Հարավային Կովկասը):
Կողմերը պարտավորվում են խթանել փոխադարձ համագործակցությունը
Եվրոպական

ինտեգրացիայի բնագավառում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպայի
միության միջեւ գործընկերության հաջող զարգացմանը, եւ աջակցել Հայաստանի
Հանրապետության ձգտմանը՝ զարգացնել համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ:

ՀՈՂՎԵՐ 2

Կողմերը կհամագործակցեն Եվրոպական հարեւանության քաղաքականության

շրջանակներում Հայաստանի Հանրապետության հնարավորությունների լիարժեք օգտագործմանը ուղղված գործողությունները զարգացնելու նպատակով:

ՅՈՒՐԱԿՐԻ 3

Կողմերը եվրոպական ինտեգրացիայի բնագավառում կհամագործակցեն Եվրոպայի միության շրջանակներում, մասնավորապես.

1. ամրապնդելով ինստիտուցիոնալ համակարգը համապատասխան մեխանիզմ ստեղծելու միջոցով, այսինքն՝ ապահովելով օրենքի կիրառումը, ինչպես նաև պատրաստելով պետական ծառայողներ եւ զարգացնելով պետական ծառայողների մասնագիտական ունակությունները Եվրոպական ինտեգրացիայի բնագավառում.
2. տեղեկացնելով հասարակությանը այն գործընթացների մասին, որոնք տեղի են ունենում Եվրոպայի միության եւ Եվրոպական ինտեգրացիայի շրջանակներում.
3. մատչելի դարձնելով երկու կողմերի ձեռքբերումները Եվրոպական ինտեգրացիայի բնագավառում՝ համատեղ խորհրդակցությունների, համաժողովների, նախաձեռնությունների եւ այլ միջոցառումների միջոցով.
4. խրախուսելով համագործակցությունը համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների միջև:

ՅՈՒՐԱԿՐԻ 4

Կողմերը կհամագործակցեն վիզային քաղաքականության, սահմանային հսկողության եւ միգրացիայի բնագավառներում:

Համագործակցությունը կիրականացվի խորհրդակցությունների, համակարգման, տեխնիկական եւ վարչական օժանդակության միջոցով՝ հետեւյալի համար.

1. գործող օրենսդրության եւ պրակտիկայի մասին տեղեկատվության փոխանակում.
2. վիզային քաղաքականության, անձը հաստատող փաստաթղթերի եւ սահմանային հսկողության բնագավառներում տեղեկատվական համակարգերի ստեղծում.
3. անձը հաստատող փաստաթղթերի ֆիզիկական եւ տեխնիկական պահպանում.
4. վերոհիշյալ բնագավառներում փորձագետների պատրաստում:

ՅՈՒՐԱԿՐԻ 5

Կողմերը կաշխատեն համատեղ՝ նպատակ ունենալով օժանդակել եվրատլանտյան գործընկերությունը ամրապնդելուն, զարգացնել եւ իրականացնել ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Հանրապետության Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: Այդ համագործակցությունը կիրականացվի հետեւյալ ուղղություններով.

1. Եվրոպական ինտեգրացիայի եւ Եվրատլանտյան գործընկերության շրջանակներում համագործակցությանը վերաբերող խնդիրների եւ Եվրատլանտյան եւ տարածաշրջանային անվտանգության բնագավառում փոխադարձ հետաքրքրություններ կայացնող այլ խնդիրների շուրջ կանոնավոր համատեղ խորհրդակցություններ.
2. Եվրատլանտյան համագործակցության հարցերով ազգային համակարգման համար ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդում.
3. վարչական ունակությունների զարգացում եւ պետական աշխատողների վերապատրաստում Եվրատլանտյան համագործակցության նպատակների համար.
4. հասարակության իրազեկում միջազգային անվտանգության եւ Եվրատլանտյան համագործակցության հարցերի վերաբերյալ.
5. վերոհիշյալ բնագավառներում գործող համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսում:

ՅՈՒՐԱԿՐԻ 6

Կողմերը կհամագործակցեն 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ հոդվածներում նշված բնագավառներում՝ իրականացնելով հետեւյալ միջոցները եւ մեթոդները իրենց

հարաբերություններում.

1. Եվրոպական ինտեգրացիայի եւ եվրատլանտյան գործընկերության բնագավառում Կողմերի միջեւ տեղեկատվության եւ փորձի փոխանակում եւ համագործակցության զարգացում.

2. համատեղ միջոցառումների կազմակերպում. խորհրդակցություններ, հանդիպումներ, համաժողովներ, կլոր սեղաններ եւ այլ միջոցառումներ երկու Կողմերի փորձագետների եւ պաշտոնատար անձանց մասնակցությամբ.

3. Եվրոպական ինտեգրացիայի եւ եվրատլանտյան գործընկերության հարցերով վերապատրաստում՝ սեմինարներ, դասընթացներ եւ երիտասարդ կադրերի համար փորձի

գործնական ուսումնասիրում կազմակերպելու միջոցով եւ յուրաքանչյուր Կողմից փորձագետների մասնակցության խրախուսում մյուս Կողմի կողմից կազմակերպված միջազգային եւ ազգային սեմինարներին եւ դասընթացներին.

4. համագործակցության համատեղ նախաձեռնությունների եւ ծրագրերի մշակում, ինչպես, օրինակ՝ հնարավոր նմանատիպ մեխանիզմներ, ուսումնական ծրագրեր, ներգրավվելով երկու երկրների համապատասխան հաստատությունների պետական ծառայողների.

5. փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում փորձագետների փոխանակում:

ՅՈՒՐԱԿԱՆ 7

Սույն Յուլազգրի իրականացման համար Կողմերը կարող են մշակել ամենամյա ծրագրեր:

ՅՈՒՐԱԿԱՆ 8

Յուրաքանչյուր Կողմ կարող է իրենց փոխադարձ համագործակցության արդյունքները տրամադրել երրորդ կողմի՝ երկու Կողմերի նախնական փոխադարձ համաձայնության հիման վրա եւ իրենց գործող ազգային օրենսդրությունների դրույթներին համապատասխան:

ՅՈՒՐԱԿԱՆ 9

Սույն Յուլազգրում ոչինչ չի ազդի այլ՝ գոյություն ունեցող կամ Կողմերի միջեւ ապագայում ստորագրվելիք համաձայնագրերի վրա: Սույն Յուլազգիրը չի ազդի Կողմերի՝ որեւէ այլ միջազգային համաձայնագրով ստանձնած իրավունքների եւ պարտավորությունների վրա: Կողմերից յուրաքանչյուրը, իր ազգային իրավական եւ վարչական դրույթներին համապատասխան եւ իր հնարավորությունների սահմաններում ու

առկա ռեսուրսներին համապատասխան, կիրականացնի սույն Յուլազգիրը:

ՅՈՒՐԱԿԱՆ 10

Սույն Յուլազգիրն ուժի մեջ կմտնի Կողմերի ազգային օրենսդրություններով նախատեսված համապատասխան ընթացակարգերի կատարման մասին միմյանց վերջին ծանուցման օրվանից:

ՅՈՒՐԱԿԱՆ 11

Սույն Յուլազգիրն ուժի մեջ կմնա երեք տարի ժամկետով: Յուլազգրի գործողության ժամկետը հետագայում կարող է երկարաձգվել Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ:

ՅՈՒՐԱԿԱՆ 12

Սույն Հուշագրում կարող են փոփոխություններ եւ լրացումներ կատարվել Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ, որոնք կձեւակերպվեն առանձին արձանագրություններով: Այդ արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Հուշագրի 10-րդ հոդվածին համապատասխան եւ կկազմեն սույն Հուշագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 13

Ցանկացած տարաձայնություն, որը կարող է առաջանալ Կողմերի միջեւ սույն Հուշագրի մեկնաբանման կամ իրականացման հետ կապված, կկարգավորվի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Հուշագրի գործողության ժամկետի ավարտից հետո դրա դրույթները կշարունակեն կիրառվել ընթացիկ ծրագրերի եւ կոնտրակտների նկատմամբ մինչեւ նրանց

ավարտը, եթե Կողմերի միջեւ այլ պայմանավորվածություն ձեռք չբերվի:

Սույն Հուշագիրը կատարված է Բրյուսելում 2005 թ. դեկտեմբերի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բուլղարերեն եւ անգլերեն. բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Հուշագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. ապրիլի 21-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 5

MEMORANDUM

For cooperation in the field of European integration and in the Euro-Atlantic structures between the Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Bulgaria

The Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Bulgaria, hereinafter referred to as the "Parties",

Led by the spirit and provisions of Treaty on Friendly Relations and Cooperation between the Republic of Armenia and the Republic of Bulgaria, signed on April 10, 1995,

Noting the high level and the results of the cooperation in the Organization of the United Nations, in the Organization for Security and Cooperation in Europe, in the frame of the Organization of Black Sea Economic Cooperation, the Council of Europe and other international organizations and regional fora,

Aiming to promote further development of better relations and strengthening the continuous cooperation in the fields of mutual interest in the area of European integration and Euro-Atlantic partnership,

Taking into account signing of the European Union Accession Treaty by the Republic of Bulgaria and the Agreement for Partnership and Cooperation between the Republic of Armenia and the European Communities and their Member States as well as Armenias inclusion into European Neighborhood Policy,

Taking note of the accession of the Republic of Bulgaria to the North Atlantic Treaty Organization and the aspiration of the Republic of Armenia for intensifying the cooperation with NATO including through Individual Partnership Action Plan,

Have agreed as follows:

Article 1

The Parties confirm their readiness to continue their active cooperation within the Organization for Security and Cooperation in Europe and to strengthen the role of the OSCE as an instrument for a peaceful settlement of the conflicts in the OSCE area, including the Southern Caucasus.

The Parties shall be committed to promoting mutual cooperation in the field of European integration aimed at successful development of the partnership between the Republic of Armenia and the European Union, and to support of the aspiration of the Republic of Armenia for intensifying the cooperation with NATO.

Article 2

The Parties shall cooperate to enhance the activities aimed at full utilization of the possibilities for the Republic of Armenia in the framework of the European Neighborhood Policy.

Article 3

The Parties shall cooperate in the field of European integration within the EU framework, in particular:

1. Strengthening the institutional structure through institution building, i.e. providing the implementation of the law as well as preparation and promotion of the state officials professional skills in the field of European integration;
2. Informing the general public about the processes within the European Union and the European integration;
3. Making popular the achievements of the both Parties in the field of European integration by the holding joint consultations, conferences, initiatives and other activities;
4. Encouraging cooperation among relevant NGOs.

Article 4

The Parties shall cooperate in the fields of visa policy, border control and migration.

The cooperation shall be carried out through consultations, coordination and technical and administrative assistance for:

1. Information exchange on legislation in force and practices;
2. Building information systems in the fields of visa policy, identity documents and border control;
3. Physical and technical security of identity documents;
4. Training of experts in the above mentioned areas.

Article 5

The Parties shall work together with the aim to contribute to strengthening the Euro-Atlantic partnership and to developing and implementing the Individual Partnership Action Plan of the Republic of Armenia with NATO. This cooperation shall be carried out in the following directions:

1. Regular joint consultations on the issues relating to European

integration and cooperation in the framework of the Euro-Atlantic partnership and other issues of mutual interest of the Euro-Atlantic and regional security;

2. Strengthening the institutional arrangements for national coordination on issues of Euro-Atlantic cooperation;
3. Enhancing the administrative capacity and training of national personnel for the purposes of the Euro-Atlantic cooperation;
4. Informing the general public on issues of international security and Euro-Atlantic cooperation;
5. Encouraging cooperation among relevant NGOs working in these fields.

Article 6

The Parties shall cooperate in the areas defined in Article 2, Article 3, Article 4 and Article 5 implementing the following means and methods in their relations:

1. Exchange of information and experience, and enhancement of the cooperation between the Parties in the field of European integration and Euro-Atlantic partnership;
2. Organizing joint events: consultations, meetings, conferences, round tables and other fora with participation of experts and officials of both Parties;
3. Training through organizing seminars, courses and internships on European integration and Euro-Atlantic partnership issues and encouraging participation of experts from each Party in international and national seminars and courses organized by the other Party;
4. Developing joint co-operation initiatives and projects, such as, possible twinning mechanisms, training programs, involving state officials from the relevant institutions of both countries.
5. Exchange of experts in sectors of mutual interest.

Article 7

The Parties may elaborate Annual Plans for the implementation of this Memorandum.

Article 8

Each Party may present the results of their mutual cooperation before a third Party on the basis of a previous mutual agreement of both Parties and in accordance with the provisions of their existing national legislations.

Article 9

Nothing in this Memorandum shall prejudice other existing or future agreements concluded between the Parties. This Memorandum does not affect the rights and the obligations of the Parties under any other international agreement. The either Party in conformity with its national legal and administrative provisions, and with its competence and available resources will carry out the implementation of this Memorandum.

Article 10

This Memorandum shall enter into force on the date of last notification of Parties to each other on fulfillment of relevant procedures provided by their national legislation.

Article 11

This Memorandum shall remain into force for a period of three years. The term of Memorandum may be renewed thereafter by mutual written agreement of the Parties.

Article 12

Amendments and additions to this Memorandum can be made by mutual written agreement of the Parties which are formulated by separate Protocols. These Protocols shall enter into force in accordance with Article 10 of this Memorandum and shall constitute an integral part of this Memorandum.

Article 13

Any disputes that may arise between the Parties regarding the interpretation or implementation of this Memorandum shall be settled through consultations and negotiations.

Article 14

After the expiration of the term of this Memorandum its provisions shall continue to apply with respect to ongoing projects and contracts until their completion, unless otherwise agreed by the Parties.

This Memorandum is done in Brussels on December 7, 2005 in two original copies, each in Armenian, Bulgarian and English languages, all texts being equally authentic. In case of disagreement on the interpretation, the English text shall prevail.

The Memorandum has entered into force on 21.04. 2006.